



# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոսի 2019 թ.

N 699-Ն


ք. Ստեփանակերտ

## ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ընդերքի մասին օրենսգրքի 59.2-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել ընդերքագործման թափոնների վերամշակման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում են»  
  
 ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՆԱԽԱԳԱՀ



Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԲՆԱԿԱԳՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
 ԲՆԱԿԱՆ ՌԵՍՏՐՐՍՆԵՐԻ  
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
 Ստից N 12/79  
 04.09.2019թ.   
 (ստորագրություն)

Հավելված  
 Արցախի Հանրապետության  
 կառավարության 2019 թվականի  
 օգոստոսի 27-ի N 699-Ն որոշման

### Կ Ա Ր Գ

### ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքագտագործման թափոնների վերամշակման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի դրույթները տարածվում են օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքագտագործման թափոնների վերամշակման թույլտվություն ունեցող ընդերքագտագործողների վրա:
3. Ընդերքագտագործման թափոնները վերամշակվում են ընդերքագտագործողների միջոցներով՝ ընդերքագտագործման թափոնների վերամշակման պլանին համապատասխան:
4. Ընդերքագտագործման թափոնների վերամշակման, ընդերքագտագործման իրավունք ունեցող անձը հանքի շահագործման ընթացքում և փակումից հետո պարտավոր է իրականացնել ընդերքագտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումները՝ շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը հասցվող վնասի ու վթարների կանխարգելման կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով:
5. Ընդերքագտագործման թափոնների վերամշակման օբյեկտում և ազդակիր տարածքներում իրականացվում է շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչների (օդ, հող, ջուր և այլն) մոնիթորինգ:
6. Ընդերքագտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումները պետք է իրականացվեն լավագույն տեխնոլոգիաների կիրառմամբ՝ հաշվի առնելով ընդերքագտագործման թափոնների վերամշակման օբյեկտների տեխնիկական առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը և բնապահպանական պայմանները:
7. Ընդերքագտագործողի կողմից ընդերքագտագործման թափոնների վերամշակման օբյեկտի համար մշակվում և հաստատվում է անվտանգության վկայագիր՝ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի պահանջների:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵՎՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

 Ա. ԼԱԶԱՐՅԱՆ